ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«02» նոյեմբերի 2017թ. № Ա/3340-Կ

# Հ Ր Ա Մ Ա Ն

## Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224–Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Ծառայողական պարտականությունների նկատմամբ անպատասխանատու վերաբերմունքի համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի օպերատիվ հետախուզության վարչության 24-րդ /Աշտարակի/ բաժնի գլխավոր օպերլիազոր Աշոտ Կարապետյանին և ավագ օպերլիազոր Լյովա Գրիգորյանին հայտարարել <<ԲԱՆԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ>>:

Հիմք՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության պետ Գ.Առաքելյանի զեկուցագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ